ՊԱՅՄԱՆԱԳԻՐՈՒՄ- ԱՇ-032

ք. Երևան 29 հունվար 2018թ.

«Մաստեր Սթայլ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ **Կատարող**), ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, մի կողմից «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամը (այսուհետ՝ **Պատվիրատու**), ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, մյուս կողմից, (Կատարողը և Պատվիրատուն միասին այսուհետ՝ **Կողմեր**) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Գնումների համակարգողի վերապատրաստման գործնական դասընթաց II փուլ.

- ՝՝Պետական գնումների մասին՝՝ ՀՀ օրենքում տեղ գտած վերջին փոփոխությունները:
- ՝՝Պետական գնումների մասին՝՝ ՀՀ օրենքի կիրառման առանձնահատկությունները:
- Գործնական աշխատանք:
- Հարց ու պատասխան:

1.2. Ծրագրի ժամկետը սահմանված է 2 օր:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի.

2.1.1. Պահանջել Կատարողից մասնագիտական ուսուցումն իրականացնել պատշաճ որակով և սույն պայմանագրի 1.2 կետում սահմանված տևողությամբ:

2.2. Պատվիրատուն պարտավոր է.

2.2.1. Ապահովել 1.1 ենթածրագրում իր աշխատակազմի մեկ ունկնդրի մասնակցությունը,

2.2.2. Մինչև Ծրագիրը սկսելը Կատարողի բանկային հաշվին փոխանցել սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը:

2.3. Կատարողն իրավունք ունի.

2.3.1. Մասնագիտական ուսուցման ծրագրի մշակումը և մատուցման ձևի ընտրությունն իրականացնել իր հայեցողությամբ.

2.3.2. Մինչև Ծրագիրն սկսելը Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը:

2.4. Կատարողը պարտավոր է.

2.4.1. Ծրագիրն սկսել ֆինանսական միջոցներն ստանալուց 5 օրվա ընթացքում.

2.4.2. Ծրագիրն իրականացնել բարձր որակով և պատշաճ մակարդակով:

3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված ծառայությունը, որը մատուցվում է սույն պայմանագրի 2.2.1 կետում նշված անձանց համար սահմանվում է 25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

4. Վեճերի լուծման կարգը

4.1. Սույն պայմանագրի կատարման շուրջ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված կողմերի կողմից.

5.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու հայերեն օրինակից, յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ.

5.3. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 29.04.2018թ.

6. Կողմերի իրավաբանական հասցեները և բանկային ռեկվիզիտները

Պատվիրատու	Կատարող
«Նորք» Սոցիալական Ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամ	«Մաստեր Սթայլ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Կ. Ուլնեցի 68	Հասցե՝ ք. Երևան, Սարմենի 1, 2/1տարածք
ՀՎՀՀ՝ 02602449	ՀՎՀՀ՝ 01571846
	Հ/Հ՝ 163008180909
	Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Գործադիր տնօրեն՝	Տնօրեն՝
----------Ա. Աբրահամյան	----------Ա. Սարգսյան